

U.S.L. 64 U.S.L. 64

Վայր ընկած հսկայական աստղը.—Մօտ ժամանակներու պրոֆ. Հէնրի Ռուօդը արևմտեան Մեքսիկայում գտել է անսովոր մեծութիւն ունեցող վայր ընկած մի աստղ, որի երկարութիւնն է 4 մետր ($5\frac{1}{2}$ արշին), իսկ ծանրութիւնը՝ 50,000 կիլոգրամ (3050 վ.). Այս վիթխարի զանդուածը այնքան ուժգնութեամբ ընկաւ երկրի վրայ, որ 3 սաժէն խորութեամբ նստեց հողի մէջ: Սատղը 110 վերստ հեռաւորութիւնից ծովի ափից ըերելու համար $\frac{1}{4}$ միլ. ֆրանկ կծախսուի: Այս աստղը երկրագնտիս վերայ ընկած աստղերից ամենամեծն է: Մինչև սրա գտնելն ամենամեծը համարելում էր Իիօ—Ժանէյրօյի թանգարանում՝ պահուող վայր ընկած աստղը. բայց սա նոր գտածից 8—10 անգամ թէթէ է:

Ելեքտրական պոստը.— Խտալիքան վերջին տարիներս պոստ-հեռագրական գործին վերաբերեալ շատ նշանաւոր դիւտեր արաւ. Մարդոնիի անթել հեռագրին հետեւեց մի ուրիշ նշանաւոր գիւտ—ելեքտրական պոստ: Խտալացի ինժիներ Պիոիչելին ներկայումս զբաղուած է այնպիսի պոստի կառուցմամբ, որ միջոց տայ նամակներ տեղափոխել ալլել մինիմուլց շինած փոքրիկ զագօններով: Սրանք պիտի բանեն մետաղաթելերի վրայ. ամէն մի վագօն կարող է տեղափոխել 2 փութ ծանրութեամբ նամակներ: Տեղափոխութեան արագութիւնը ուղղակի անհաւատալի է՝ այն է 350 վեցստ մի ժամում: Այսպիսի արագութեամբ նամակը Հռոմից Փարիզ կհասնի 5 ժամում: Մեաաղաթելերը ամրացած են երկաթեայ ձողերի վրայ, իւրաքանչիւր գիծ երկու ճանապարհ կունենայ, այնպէս որ նամակների տեղափոխութիւնը անընդհատ և անխափան երկու ուղղութեամբ էլ կկատարուի: Այսպիսէ ճանապարհների շինութեան վրայ շատ ծախս չի գնայ, որովհետեւ արդէն գոյութիւն ունեցող հեռագրական դժերը կարելի է այս նպատակի համար գործածել. այսպէս օր. Հռոմ—Նէապոլ դիմքը շինելու համար (270 վերստ) միայն կէս միլիոն ծախս կլինի: Պարզ է, որ Խտալացի ինժիների գիւտը նրա հայրենիքում մշ. ուշագրութեան արժանացաւ: Պոստերի նախարարն առանձին մասնաժողով է նշանակել վերոյիշեալ նախարարի իրականացնելու նպատակով, և կարճ ժամանակում փոքրի համար Հռոմից նէապոլ

այս տեսակ մի դիմ կանցկացուի: Անգլիական մի քանի ակցիոներական ընկերութիւններ շտապեցին հնարողին միջոցներ առաջարկել Անգլիայում նրա նախագիծը գործադրելու համար, ուստիայն Պիսիչելլին դեռ չի ընդունել նոցա առաջարկութիւնները:

Հեռագրական նոր կաբել Խաղաղ ովկիանոսում.—Ներկայում վերջացել են խաղաղ ովկիանոսում անգլիական հեռագրական կարելի վրայ կատարած բոլոր աշխատանքները. կարելի (ջրի տակի հաստ պարան) երկարութիւնն է 12,500 վերստ (մօտաւորապէս Պետերբուրգից մինչև Կամչատկա): Նոր կարելը միացնում է Կանադայի Վանկուվեր քաղաքը նոր Զելանդիայի և Քուինսլենդի հետ, անցնելով Փաննինգ, Փիդի և Նոր Ֆոլկ կղզիների վրայով: Այս ձեռնարկութիւնը նստել է 2,000,000 ֆ. ոտք. (մօտ 20 միլիոն ըուբլի): Այս ահագին տարածութեան վրայ շինութիւնը առաջ էր գնում անընդհատ: աշխատանքի ժամանակ անսպասելի գժուարութիւններ ամեննենին առաջ չեկան:

Կենդանիների լազն ու ծիծառը.—Նատ քնագէտներ դիտել են, որ կենդանիներն էլ մարդկանց նման լավիս են ծանր վշտից կամ ցաւից: Այսպէս՝ ձիերը, շները, եղջրւրաւոր անասունները, կապեկները, փղերն, ուղտերը, ընձուղտները, կոկորդիլոսներն և ուրիշ կենդանիներ լաց են եղել: Նիմականդէն ոկում է լալ, երբ վախենում է, որ իրան շուտով կպատժեն որևէ արարմունքի համար, որի պատժելի լինելը առաջնուց փորձով գիտէ: Դժուար է ասել, թէ ներկայ դէպքում ինչն է արցունքների պատճառը՝ արդեօք ցաւի նախազգացումը, թէ պատժողի գութը շարժելու ցանկութիւնը: Գոկտոր Բէրլէյ ձաւա կղզու վերայ ճանապարհորդելիս հրացանի է բռնում մի կապկի, որ ծառի վերայ նստած գրկի մէջ բռնել էր իւր ձագին: Մայըը ծանր վերաւորուած վայր ընկաւ գետին, բաց չթողնելով ձագին: Մօտենալով նորան, դոկտորը տեսաւ, որ մայըը դառնապէս լաց էր լինում: Եղել են գէսպեր, որ կապեկները լաց են եղել այն ժամանակ, երբ իրանց ցանկութիւնները չեն կարողացել կատարել: կամ երբ տեսել են իրանց մտերիմ կապեկների կը ած տանջանքները: Մի քանիսը ճանդարտ են լաց լինում, բայց կան և ողբացողներ և բարձր ձայնով կսկծացողներ:

Բռնուած և կապկապուած փղերը, ինչպէս և եղջերուները, երբ համոզւում են, որ այլ ևս հնար չկայ որսողի ձեռքից ա-

դատուելու, նոյնպէս լաց են լինում։ Մի քանի ճանապարհորդ՝ ներ պատմում են, որ շատ անդամ տեսել են, թէ ինչպէս ուղղաբերը շատ յոգնածութիւնից լաց են լինում։ Աֆրիկայի հռչակաւոր հետազօտող Լիվինգտոնը պատմում է մի փոքրիկ շնագայլի մասին, որ երեխայի պէս լաց էր լինում, երբ նրան երես տուող մարդիկ էլ չեն ուզում իրանց ձեռքերի մէջ առնել։ Պառաւ մեծ մկները լալիս են ոչ թէ միայն իրանց անձնական տանջանկների ցաւից, այլ և այն ժամանակ, երբ տեսնում են օրինակ խեղդուած ջահէլ մի մուկ։ «Կոկորդիկոսի արտասուքներ թափել» արտայայտութիւնը ծագել է նրանից, որ կոկորդիկոսները յիրաւի լաց են լինում և նրանց լացը շատ նման է փոքրիկ մանկան լացին։ Լացի պատճառը հաւանականաբար քաղցածութիւնն է, որի հետ խառնվում է որսին զրաւելու ցանկութիւնը։ Երբ փոկերը ընկնում են որսորդների ձեռքը և զգում են, որ գժեազդութիւնից չեն ազատուելու, ազերսակի կերպով սկսում են բղաւել՝ նրանց աչքերից արցունքներ են թափուում, իսկ իրանք դալարւում են գետնի վրայ, թաթերը վերև բարձրացնում, կարծես գթութիւն են հայցում։ Շատ որսորդների, մանաւանդ սկսնակների վերայ այս տեսարանն այնպէս սաստիկ աղդում է, որ նրանք շատ անդամ հրաժարւում են փոկերի վրայ ձեռք բարձրացնելուց։ Ընծուզը մեռնելիս արցունքներ է թափում։ Ամերիկայում ապրող կաթն պոչանի մողէնների մի տեսակը նոյն իսկ արեան արցունքներ է թափում։ Արցունքները շատ անդամ մի սաժէն հեռաւորութեան վրայ են ցայտում, հաւանականաբար ինքնապաշտպանութեան համար։

Աենդանիների ծիծաղն աւելի քիչ անդամ է նկատուել։ Անհասկածելի է, որ չները ծիծաղում են։ Աւըիշ զիտողների հետ միասին Վիկոնտ գ'էտլէն պնդում է, որ չների մկանունքներն այնպէս են շարժւում, որ շատ նման է ծիծաղին։ Իւր գիտողութիւնները նա հաստատում է վայրկենապէս հանած լուսանկարչական պատկերներով, որ վերցրել է ծիծաղող չներից։ Ինչպէս մարդկանց մէջ պատահում է, այնպէս էլ չների մէջ կան անհատներ, որոնց հեշտ է ծիծաղեցնել, միւսները շատ քիչ և հազուագիւտ դէպքերումն են ծիծաղում։ կան և այնպիսիներ, որոնք բոլորովին չեն ծիծաղում։

Լողացող կղզիներ.—«Ենիսէյ» լրագերը հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում լողացող կղզիների մասին, որոնք

ամէն ամառ Սառուցեալ ովկիանսոսում Արևելեան Սիբիրի տիեզի մօտ յայտնուում են: Այս կղզիները յանկարծակի են յայտնուում, և բաւական խոշոր են լինուում՝ ծածկուածք բռւսականութեամբ և վրան ունենալով կենդանի արարածներ: Շատ որսորդներ առժամանակ տեղափոխուում են այս խարհքաւոր կղզիների վրայ և այնտեղ յաջողութեամբ որսում են եղջերուներ, աղուէններ և ուրիշ աղուամազ կենդանիներ, այլ և թռչուններ: Բայց վայն եկել է և նրանց տարել, եթէ ժամանակին չկարողացան շարժական կղզիներից քաշուել իրենց նախկին տեղերը՝ քամին նրանց իրանց ընակարանների հետ միասին կըշի, կըտանի Սառուցեալ ովկիանսուի անյայտ, անծայր հեռաւոր տարածութիւնները: Մի անգամ այսպէս կըրաւ մի ամբողջ գիւղ ընակիչներով, չներով և եղջերուններով: Ինչ վերաբերուում է խորհրդաւոր կղզիների ժադան, ենթադրում են, որ սրանը վիթխարի սառուցներ են, որոնց վրայ գիւղուել են դետաբերաններից բերուած ծառերը, իսկ քամին էլ հող է բերել: Բեեռային բաւականին տաք ամառուայ ընթացքում, երբ երկար բազմօրեաց ցերեկներ են լինում միայն, սառուցների վրայ բուսականութիւնը կարողանում է զարգանալ, իսկ բուսականութեան հետ միասին յայտնուում են կենդանիներն ու թռչունները:

Սիերգրուալի վերաբարձր. — «Արարատի» անցեալ համարում հաղորդել էինք, որ նորվեգիայում սպասում են Հիւսիսային ըսեռային երկները հետազօտող կապիտան Սիերգրուալին: Նորվեգացիների ուրախութեանը չափ չկար, երբ նորերս այդ էկոսպեկտիցիան «Ֆրամ» շոգենաւով վերադարձաւ հայրենիք, 4 տարի և 3 ամիս բացակայելուց յետոյ:

1897 թուին կապիտան Օտտո Սիերգրուալը նորվեգիայից ստորախնդից (ազգային պատգամաւորական ժողով) 20,000 կրոն է ստանում «Ֆրամ» շոգենաւի վերաշնուրութեան համար: Մնացած ծածկուելը մասնաւոր նուիրատուութիւններով ծածկուեցան: Եկապեկիցիայի գիտական մասը շատ լաւ էր կազմակերպուած. բացի նորվեգացի երետասարդ ընագէտներից մասնակցում էին նաև մի նվեդացի բուսաբան և մի Դանիացի կենդանաբան: Այսպիսով այս եկապեկիցիան իւր կազմութեամբ զուտ սկանդինավական ընաւորութիւն էր կրում:

Լաւ պատրաստութեամբ ճանապարհ ընկաւ Սիերգրուալի եկապեկիցիան 1898 թ. նորվեգիայից և Գրենլանդիայի արևմտեան ափի երկարութեամբ ուղևորուեց դէսի հեւսիս: Դէսի հիւսիսա-

յին ընկերուն էր գնացել նաև Անդրեյի եկապեղեցկան մի տարի առաջ, միտքն տարբեր եղանակավ, այն է օգապարիելով. բացի Անդրեյին մինտուելուց և անհասաժեշտ ուղղութ նրան օգնելուց Սկէրդուակի գլխաւոր նպատակն էր Սմերի նեղութիւն և Ռոբըզոնի ջրանցքի միջավ անցնել և ամբողջ Գրենլանդիայի հետոփացին կողմից մի պատուա անել:

Պէտք է լուս պատկեցացնել և հասկանալ այս ձեռնարկութեան վեհութիւնն ու գժուարաւթիւնը: Եթէ Սկէրդը ու այս նապահ ընկաւ իւր յանդուռդն մտադրութիւնը կապարելու, դեռ ևս ոչ ոք հաստատութեամբ չէ կարող պնդել, թէ հիւս սիսային բևեռամյին այս մայր ցամաւըք» երօն կրզիք և արդեաք մինչև բևեռը չի տարածւում», կամ աւելի հեռու, մինչև նոր Սկէրդի կղզիները: Ճիշտ է, պմերիկացի Լյուինանսա Ռոբերտ Պիտը 1892 թուբին Դրենլանդիայի հիւսիսարևելեան ավելին 81°37' կում լայն և 32—33° արևմտ. երեւ (Քրինլիչեց) տակ գտաւ Ակավասութեան ծովախորշը, որ և հիմք դարձաւ ենթագրելու թէ Դրենլանդիային հիւսիսային ծայրը 82—83° լից հիւսիս չի տարածւում, բայց և այնպէս կատարելապէս ուղիւնքն էր մ'սում, թէ հիւսիսային ափերեց ծովը որքան մասաչելի է: Վագհումառակն, հաստատապէս յայտնի էր, որ Դրենլանդիայի արևելեան ավել զգալի մասը շղթայուած էր անբնահատ անշորժ տառացով, որի պատճառակ այս տեղերում նաև արելութիւնը համարեա թէ անհասարին էր գտանաւում: Սկէրդը ուղիւնքն էր շուրջ վերաբերուած էին տառուցների հետ ունեցած կոռուն Ամբուի նեղուցից հարաւային մասում, որտեղից բաժանեւում է Բաֆֆինի նեղուցը: Ուզեղ դէպի հիւսիս ճանապարհ ընկնելով, Խիզախ կապիանը մտագրութիւն ունէր կենսիդի և Ռօբզօն կոշուած նեղ պիանը մտագրութիւն ուղերս գալ Սառուցեալ ովկիւնուի այս մասը, որտեղ կղզիներ (իսկ ոմանց կարծիքով նաև սառուց) չկային: Ինչպէս Սմերի նեղուցը, այնպէս էլ կենսիդի նեղ ջրանցքը շատ վանդակաւոր անցքեր են պայունակում, որտեղ սառուցի և հուսանքների աննպաստ պայմաններ կան: Ռօբզօնի ջրանցքի միջով անցնելով, Ավելի գրուալ մտագրութիւն ունէր ծուռել դէպի հիւսիսային հասանակ մօտով (որտեղ Մարկհեմը դեռ 1876 թուբին հիւս. լայն. 83°20' հասաւ) և այսուղից ուղակի հիւսիսային ընեռը զնալ, հետեւ ընկեռային նոյն հոսանքին, որ արդէն առաջ էլ «Ֆրամ» տարել էր ընեռի կողմը: Այս հոսանքը Սկէրդը ուղղուակի կործեւքով այստեղ հակառակ ուղղութիւն էր ստանում, որ և աւելի յոյս էր տալիս ընեռին աւելի մօտ գնալու:

Սրանից էլ առաջ կապիտան Օտոս Սվերդրուպը յայտնի էր դարձել իրք բևեռացին լաւ ճանապարհորդ։ Նա ծնուել է 1855թ. Նորվեգիայում և 17 տարեկան հասակից իւր կեանքը անց է կացրել ծովի վերայի ։ Շուլանդիայի ափերի մօտ նա մի օր ականատես եղաւ շոգենաւի խորտակման, որի ժամանակ ցոյց տուեց զարմանալի սաւնարիւնութիւն և բազմաթիւ ճանապարհորդների ազատեց իւր ճարտարութեամբ։ Եթե Ֆրիդիօֆ նանսէնը 1888—89թուին էկսպեդիցիա կազմեց դահուկներով ամբողջ Գրենլանդիան արևելքից արևմուտք, Խոստինդ հրուանդանից մինչև Գոտխար ծոցը՝ անցնելու, այս դժուար ճանապարհորդութեան ժամանակ Օտոս Սվերդրուպն էլ նրա ուղեկցողների մէջն էր։ 1893—96թուերին նանսէնի աշխարհահռչակ ճանապարհորդութեան ժամանակ Սվերդրուպն էր «Փրամի» հրամանատարը, իսկ 1895թ. դարունքից սկսած, եթե նանսէնն ու Յոհաննսէնը թողին «Ֆրամը» և երկուակով գնացին Սառուցեալ ովկիանոսի սառցային անապաներում չտեսնուած արշաւանք—«զբօսանք» կատարելու Սվերդրուպը մենակ մնաց էկսպեդիցիայի մնացած մասի գլխաւոր ղեկավար, ինչպէս յայտնի է, մեծ եռանդով և հմտութեամբ կատարեց իւր վրայ դրած ժանը պարտականութիւնները և ողջամբ հայրենիք հասցրեց թէ էկսպեդիցիայի բոլոր անդամներին, և թէ նանսէնի փայտիայած թանկադին նաւը։

Արդէն հէնց այս ճանապարհորդութեան ժամանակ, եթե «Ֆրամը» բևեռային հոսանքներով դէպի անյայտ նպատակը տարուելով՝ տառնեակ ամիսներ սառուցների մէջ խրուած ու կապկալուած մնում էր։ Սվերդրուպն ինքն իրան ծրագրներ էր կազմում տուն վերադառնալուց յետոյ նորից փորձել բևեռին հասնելու շարժական սառուցներով։ 1896թուին հայրենիք վերադառնալով, նա արդէն հետեւեալ տարին սկսում է նոր ձեռնարկութեան համար միջոցներ և մարդիկ ճարել։

Ամբողջ քաղաքակիթի աշխարհը ամենամեծ հետաքրքրութեամբ սպասում է հէնց նոր վերադառնալ էկսպեդիցիայի ելքին։ Սակայն ինչ տեսակ հետեւանքների էլ հասած լինի նա, չի կարելի չիանալ և զգարմանալ այս անձնազոհ մասդոց վրայ, որոնք չորս տարուց աւելի դիմացել են բևեռային ցրտին։ յաղթել են բազմաթիւ վտանգների, տարել են բևեռային ծովի մենակութիւնը, կեանքի բոլոր անյարմարութիւններն ու դժուարութիւնները սեղմուած նաւի վրայ՝ և այս բոլորը նրա համար, որպէս զի ընդարձակեն մարդկային դիտութեան հարիվոնը և բևեռային գարաւոր հանելուի լուժման նպաստեն։